ՔԱՂԱՔԱՑԻԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2018/01/04

ք. Երևան «17» հունվարի 2018թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Գ.Ալոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ քաղաքացի Մուրադ Գարեգինի Մինասյանը, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության և «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմ» ՊԿ հիմնարկի միջև 30.12.2016թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի և 25.12.2017թ. թիվ մեկ համաձայնագրի իրականացման համար՝ Պատվիրատուն հանձնարարում է Կատարողին Նիսսան մակնիշի 322LL60 պետհամարանիշի տրանսպորտային միջոցի վարորդական պարտականությունների կատարում (վարորդական իրավունքի վկայական MB908614առ 02.03.2013թ), այսուհետ «Աշխատանք»:

1.2. Պատվիրատուն ապահովում է Կատարողին վառելիքի անհրաժեշտ քանակով և իրականացնում տրանսպորտային միջոցի տեխնիկական սպասարկումը:

1.3. Աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվում 2018թ. հունվարի 18-ից մարտի 31-ը:

1.4. Աշխատանքը Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում աշխատանքների կատարման ակտով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Աշխատանքի համար պայմանագրային գին է սահմանվում.

-18.01.2018թ.-31.01.2018թ. համար՝ 75.000 / յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ,
-01.02.2018թ.-28.02.2018թ. համար՝ 75.000 / յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ,
-01.03.2018թ.-31.03.2018թ. համար՝ 75.000 / յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ,

2.2. Վճարումը կատարվում է փոխանցումով, աշխատանքների կատարման ակտի ստորագրումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է առ 31.03.2018թ. ժամկետով:

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագրում կատարված ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք գրավոր են և ստորագրված Կողմերի կողմից:

Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	*Կատարող՝*
ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	*Մինասյան Մուրադ*
Ամերիաբանկ ՓԲԸ	*Անձնագիր AN0401634, տրված*
Հ/հ 1570027609970100	*008,07.03.2013թ.*
ՀՎՀՀ 01501898	*ՀԾՀ 1811590446*
	ք. Երևան, Աղանայի փ., տ. 13
	Հ/հ 24100281596500
Գլխավոր տնօրենի պաշտոնակատար	
Գ. Ալոյան	*Մ. Մինասյան*

1-10